ԾՆՈՒՆԴԴ ԲԱՐԻ, «ԱՐՑԱԽԱԿԱՆՉ»

Ակամայից ուսկնդիր լինելով մի խումբ մարդկանց զրույցին, մտածումների մեջ ընկա. վերջապես, ո՞րը է ճշմարտությունը: Ախր, մեր կյանքի, թվում է, թե այբուբենային ճշմարտության ընկալումը տարամերժ է. մեկն ասում էր, թե հիմա կյանքն ազատ է, թերթերը շատացել են, ամեն ինչ էլ գրում են, իսկ մյուսը ձեռքն էր թափ տալիս. «Դրանից ի՞նչ օգուտ՝ գրիր հա գրիր, ինչ սիրտդ ուզում է՝ ասա ո՞վ է քեզ լսողը, քո խոսքը բանի տեղ դնում. հիմա էլ խոսքի «ինֆլյացիա» է. ջանս»:

Ըստ երևույթին, երկուսն էլ ճիշտ բաներ էին ասում: Իրավ, այսօր մի տեսակ ճշմարիտ խոսքը, ինչպես ժողովուրդն է ասում, ականջի տակով է անցնում: Օրինակ, խնդրեմ, քանի՞-քանի անգամ է գրվել Արցախում՝ Ադրբեջանի կողմից խորհրդային ներքին զորքերի մարտիկների մասնակցությամբ, կատարվող բռնությունների մասին, բայց ոչինչ չի փոխվում: Ըստ երևույթին, սա ևս նոր երևույթ է, որը կարելի է համարել այն սնստվերը, որ մշտապես հետևում է դեմոկրատացման լուսավոր ընթացքին: Եվ պիտի կարծենք, որ այդ մութ ստվերները աստիճանաբար կփոքրանան, և ի վերջո. կչքվեն, եթե դեմոկրատիայի լույսերն ավելի բռնկվեն: Եվ, կարծում եմ, որ հենց դեմոկրատիայի այդ լույսերից են նաև այն լրագրերը, շաբաթաթերթերը, որոնք հետզհետե շատանում են մեր կյանքում և այդ բազմացումը մարդիկ սրամտորեն անվանում են՝ անձրևից հետո սնկերի աճում: Ինչ էլ լինի, անձրևը բարեբեր է և աճող սունկերն էլ յուրատեսակ բարիք են մեր կյանքում:

Բազում թերթերի մեջ մեզ համար վայրուց սպասվածն էր «Արցախականչ» շաբաթաթերթը, որը լույս է ընծայում «Արցախ» հայրենակցական միությունը: Թերևս այդ թերթի դերն ու նշանակությունը մեկնաբանելու հարկ չկա, բոլորին հայտնի է, որ նա եկել է ճշմարտացի տեղեկությամբ, փաստերի տրամաբանությամբ գործացնելու այն պայքարը, որը մղում է Արցախի հայությունը՝ միջազգային իրավունքով վերապահված իր ինքնորոշումը հաստատելու համար: Միայն նշենք, թե ինչպիսի պայմաններում է ծնունդ առել «Արցախականչը»: Իսկ դրա համար ավելի հիշտ կլինի մեջբերում տալ «Մուտք» վերնագրով, իմ կարծիքով առաջին հարի համար խիստ անհրաժեշտ, խմբագրականի վերջին տողերը.

«Աշխարհի և ոչ մի ծայրում աստվածապաշտ և ոչ մի հավատացյալ չի կարող հանգիստ լինել,— ինչ հավատք էլ նա ունենա,— երբ Արցախում գնդակոծվում և ավերվում են եկեղեցիները, հալածվում նրա սպասավորները:

Աշխարհում և ոչ մի ժողովուրդ չի կարող վստահ լինել իր ապագայի համար, քանի դեռ կան Սումգայիթ կազմակերպող, ժողովրդի կամքին բռնացող ուժեր: Պատմությունը երկար սպասել չտվեց անպատիժ մնացած սումգայիթյան ուժերին երևալու Նովի Ուզենում, Տուվայում, Օշում...

Նույն ուժերն են գրավել երկրի լրատվական միջոցները՝ փորձելով փարիսեցիության (կեղծիքի) հեղեղի մեջ խեղդել հասարակական գիտակցությունը: Տեղեկատվական տեռորի թունոտ նետերը առաջին հերթին ուղղված են Արցախի դեմ:

Ահա այսպիսի պայմաններում է ասպարեզ իջնում «Արցախականչը»:

•°•

Համաձայնենք, իրոք, տագնապալի ժամանակներ է ապրում Արցախը՝ ընդհանուր առմամբ մեր ոչ դյուրին և ոչ անհանգիստ օրերի մեջ: Եվ հենց դրա համար էլ, որպեսզի մենք էլ չուշանանք հաճախ ուշացող զինվորների պես, մեր ուսկնդիրներին միշտ պետք է հասնի Արցախի ձայնը, Արցախի կանչը, որը մեզ կբերի «Արցախականչը»:

Իմ այս մտորումը աքանչելիորեն մարմնավորում է մեծ հայրենասեր Զորի Բալայանի խոսքը, որը տպագրված է թերթի հենց ճակատին և, որը արցախցիների երազանքը գործով ու պայքարով իրողություն դարձնելու յուրօրինակ մի հորդոր է, արցախցիներին Արցախի փրկությանն ու վերածնությանը հրավիրելու սրտի կանչը:

Ահա այն. «Արցախականչ» չի նշանակում միայն Արցախի կանչ, այլև այն, որ Արցախը կարիք ունի մոր կանչի: Կանչը միշտ էլ հույս է: Հույս, որը մենք երբեք չենք կորցնում, որը երբեք չի լքի արցախցուն, քանի նա էենդանի է: «Արցախականչը» ոչ միայն օգնության է կանչում, ոչ միայն զարթոնքի է կոչում, ոչ միայն պարտավորեցնում է լինել առաջին գծում, այլև գործուն հույսը դնում է հենց արցախցիների վրա: Մեր փոխարեն ոչ ոք չի պայքարելու հայրենի օջախի համար, մեր փոխարեն ոչ ոք չի հերկելու հայրենի հողը, մեր փոխարեն ոչ ոք չի իրագործելու մեր նախնիների երազանքը «Արցախականչը» մեզ այսօր նույնքան անհրաժեշտ է, որքան մեր բազմաչարչար պատմության մեջ անհրաժեշտ էր «Ռանչպարների կանչը»:

Շաբաթաթերթի այս անդրանիկ համարում խորիմաստ և սրտառուչ խոսք ունի Արցախի հարցում միշտ Զորի Բալայանին զորավիգ, միշտ նրա կողքին կանգնած Սոս Սարգսյանը, որից արվող այս մեջբերումները ձեզ շատ բան կպատմեն: Իրավ, Արցախն այսօր հայոց այն երկրամասն է, որին արժանի լինելու պարտքն ունի ամեն մի հայ և, որով պիտի չափվի մեր նվիրվածությունը: «Գիտենք՝ զարթնել ենք ու կանգնել նոր ճամփի գլխին... Պիտի մեր քայլն անենք, մեր նոր քայլը, որ ծանր է ու դժվար... Զարթնել ենք, ու զարթնեցնողը համայն հայության դու ես եղել, իմ Արցախ, իմ քույր ու եղբայր, դու, դու, որից ես ոչ մի օր չեմ բաժանվում: Եվ դու չպետք է երերաս, չպիտի ընկերկես, մեր ետևինը անդունդ է... Մեր քարավանի նառն ու առաջնորդը դու ես այսօր: Ու կտրել ես անապատը, մեր բախտի աստղ, մեր կապույտ հորիզոն Արցախ: Դուրս արի քարի արանքից, նորից լցվիր իմաստությամբ, հրաշք գործիր, Մովսեսի նման գերությունից ազատիր ցեղը հայոց»:

«Արցախականչի» հենց առաջին համարում սրտամոտ անուններ կան, որոնց մասին չես կարող չասել, և, որոնք ոչ միայն «Արցախականչի» զարդն են, այլև խորհրդանիշը՝ Արցախով ապրած ու ապրող, Արցախով շնչող գրողներ՝ Հովհաննես Շիրազ, Բագրատ Ուլուբաբյան, Գրիգոր Բալասանյան, Հրաչյա Բեգլարյան...

Նաև ասենք, որ խմբագիրը՝ Մուշեղ Բաղդասարյանը, նույնպես արցախցի է և թերթի հենց առաջին համարով լավ հայտ է ներկայացրել:

Վերջում մի ցանկություն իմ կողմից թող Արցախի կանչը ուրախության կանչ լինի. ծնունդդ բարի, «ԱՐՑԱԽԱԿԱՆՉ»:

Վլադիմիր ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հաղորդվել է արտասահմանի համար՝ հայերեն և այլ լեզուներով, 1990 թ. նոյեմբերի 24-ին: